**ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը «Էկոնոմ պլյուս» հանդեսի 10-ամյակին նվիրված միջոցառմանը**

21 նոյեմբերի, 2011թ.

Հարգելի ուսանողներ և գործընկերներ,

Արդեն տասը տարի է, ինչ «Էկոնոմ պլյուս» հանդեսը լույս է տեսնում իր բազմաբովանդակ նյութերով, ծրագրերով և մտահղացումներով: Այս տարիների ընթացքում հանդեսն անցել է կայացման ճանապարհ և արժանի է դարձել իր կոչմանն ու առաքելությանը: Բարձր գնահատանքի է արժանի այս հանդեսի դերը մերուսանողների համալսարանական առօրյայի լուսաբանման գործում:

Աշխարհն այսօր արագ է փոխվում՝ ի հայտ բերելով նոր մարտահրավերներ, որոնց համարժեք պատասխանելու և ժամանակին համընթաց քայլելու համար՝ մենք պետք է անհրաժեշտաբար վերափոխվենք, բարեփոխվենք և կայուն քայլերով առաջ շարժվենք՝ ժամանակի պահանջներին համահունչ կազմակերպելով մեր աշխատանքները:

Այսօր մեր կրթօջախում սկսվել է վերափոխման գործընթաց. «Մենք փոխվում ենք» խորագիրը դարձել է ոչ միայն մեր կարգախոսը, այլ նաև՝ գործելաոճը: Այդ գործում հաջողելու համար մենք բոլորս պետք է անսխալ զգանք փոփոխությունների քամու ուղղությունը, սահմանենք առավել բարձր նշաձող, փորձենք ձևավորել նո՛ր մտածողություն, ուսումնական, գիտական և վարչական գործընթացին տանք նո՛ր շունչ և զարգացման նոր ազդակներ:

Միաժամանակ՝ անհրաժեշտ է ոչ թե դիմադրել ժամանակի պահանջով պարտադրվող փոփոխություններին, այլ օգտագործել այդ ուժը՝ որպես նշանաբան ունենալով հին չինական իմաստությունը, որն ասում է՝ «Երբ փչում է քամին, հարկավոր է ոչ միայն վրան կառուցել, այլև՝ հողմաղաց»:

Յուրաքանչյուր ուսանող պետք է հստակ պատկերացնի, որ 21-րդ դարում գիտելիքն է յուրաքանչյուրի վաղվա հաջողությունների և լավագույն ապագա կերտելու գրավականը: Այս գործում, անշուշտ, իր ուրույն դերը պետք է ունենա նաև «Էկոնոմ պլյուսը», որպես ուսանողների ուղեկից, խորհրդատու և լավ բարեկամ: Տնտեսագիտական համալսարանի յուրաքանչյուր հիմնախնդիր բոլորինս է և դա հնարավոր է լուծել համատեղ ջանքերով:

Սիրով շնորհավորելով հանդեսի 10-ամյակը՝ խմբագրակազմին, ուսանողական խորհրդին մաղթում եմ, որ պարբերականն իր իմաստությամբ և բեղուն ստեղծագործական ձեռքբերումներով շարունակի և ավելի լայն թափով իրականացնի իր կարևոր առաքելությունը: